

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшахъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ Ե Լ Ե Ք Ե Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիւրով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւքանչիւր բաւին 2 կոպեկի:

Տ Ե Լ Ե Ք Ե Ն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԳՈՒԹԻՒՆ

Մեր հեռագիրները. Ի դուր է թիւքրիսն ձգե-
լու. Հայոց հարցը և եւրոպական մա-
մուլը. — ՆԵՒՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կրական կեան-
քի փոփոխութիւնները. Կրթական հարցը.
Թիւքրիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшахъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄԵՐ ՀԵՌԱԳՐՆԵՐԸ (Մեր թղթակցից)

Մեր թղթակցիցը Պետերբուրգից հեռագ-
րում է մեզ՝ յունիսի 1-ից:

Ներքին, մայիսի 31-ին, Նոյա կայսերական
Մեծութիւնները Պետերբուրգում ընդունեցին
Հայոց կաթողիկոսին: Ներքինը կա-
յարանից կաթողիկոսը գնաց պալատ վեց
սպիտակ ձի լծած հանդիսւոր պատմա-
կան կառքով: Առջևից վարդապետները տա-
նում էին կաթողիկոսական նշանները, ե-
տեւից, պալատական կառքերով, գնում էր
կաթողիկոսի սկիւտան:

Վեհափառ կաթողիկոսը, թարգման Ե-
զովի ուղեկցութեամբ, ներս հրաւիրեց Նո-
յա Մեծութիւններին մօտ: Տասն և հինգ
բազէ անցնելուց յետոյ, ներս կանչվեց կա-
թողիկոսի սկիւտան, որի անդամներին թարգ-
ման եզով ներկայացրեց Նոյա Մեծութիւն-
ներին: Ապա սկիւտան հեռացաւ:

Վեհափառ կաթողիկոսը Նոյա Մեծու-
թիւններին մօտ էլի տասը բազէ մնաց: Ըն-
դունելութեան վերջը պալատում նախաձա-
ռովեց կաթողիկոսին և սկիւտային առան-
ձին: Ամենքը Պետերբուրգ վերադարձան կա-
տարեկապէս զմայլած արքայական սղորմած
ընդունելութիւնով:

«НОВОСТИ» լրագիրն ասում է, որ եթէ
Երեւանի տանը դաշնակցութեան կողմից, Կեր-
մանիայի առաջնորդութեամբ, գաղտնի պաշ-
տպանութիւն չը լինէր, Բ. Կուսը չէր հա-
մարձակվի մերժել պետութիւնների ծրա-
գիրը: Այս երեւոյթեան դաշնակցութիւնը
նեցուկ է հանդիսանում բարբարոս բռնա-
կալութեան:

«Լրագիրը հեռագիր է ստացել, որ նոյն

խիսկ «Kölnische Zeitung»-ը զգուշացնում է
Թիւքրիսի հայկական խնդրում ցոյց
տուած յամառութեան հետեւանքներէն,
որովհետեւ Կերմանիան հաւանութիւն կը
տայ Անգլիայի և Ռուսաստանի բոլոր գոր-
ծողութիւններին:

ԻԶՈՒՐ Ե ԹԻՒՐԿԻԱՆ ՁԳՁՈՒՄ

Հայոց հարցը, իր 25 տարվայ զոյու-
թեան ընթացքում, հասել է զարգացման
այն աստիճանին, որ սրանից յետոյ նրան
խեղդել, սպանել, մոռացութեան տալ, ան-
հնար է և անեղեակայելի:

Այդ պատճառով ձգձգել այդ հարցը, աշ-
խատել արհեստական միջոցներով, դիպ-
մատիական խտրիչներով ուշացնել նրա լու-
ծումը, ինչպէս այդ անում է թիւքրեաց
կառավարութիւնը, կը նշանակէ աւելի զոր-
գուն մի ամբողջ ժողովրդի լարված համ-
բերութիւնը, կը նշանակէ, ինչպէս ժողովու-
րդն է ասում, «կրակի վրա իւղ ածել»:

Սրանից մի քանի ամիս առաջ, երբ Սա-
սունի կոտորածներին լուրը եւրոպա-
հասաւ, եւրոպական հասարակութեան և
մամուլի մի աննշան մասը միայն արձա-
գանք տուեց Հայ ժողովրդի բողոքի աղա-
ղակներին. և եթէ թիւքրեաց կառավարու-
թիւնը նոյն իսկ այն ժամանակ մի քանի
միջոցներ ձեռք առնէր ապահովելու հայե-
րի վիճակը, — նա զրանով կը փակէր եւրո-
պայի բերանը:

Իսկ թիւքրեան այդ չարքը:
Ընդհակառակը, հարցը աւելի ծուռելով,
նա թող չը տուէր, որ նոյն իսկ միջազգա-
յին արդարութեան մի այնպիսի առաջադ-
րութիւնը, ինչպիսին էր քննիչ յանձնաժո-
ղովի գործունէութիւնը, կանօնաւոր կերպով
առաջ դնար, այլ ընդհակառակը, ամե-
նայանդուզն սանձարձակութեամբ կապեց,
կաշկածեց եւրոպական քննիչների ձեռքերը,
և նոյն իսկ ծաղրի և վիրաւորանքի առար-
կայ դարձրեց նրանց:

Եւ ահա եւրոպայում սկսվեց վրդովմունք
նոյն իսկ հասարակութեան և մամուլի այն
շրջաններում, որոնք թիւքրեայի կողմնակից
էին և թշնամի հայոց հարցին:

Բայց թիւքրեան էլի խելքի չեկաւ:
Եւ երբ եւրոպական երեք պետութիւն-

ները ներկայացրին սուլթանին մայիսեան
րէֆորմների ծրագիրը, մի համեստ և վերին
աստիճանի խղճով ծրագիր, թիւքրեաց կա-
ռավարութիւնը, փոխանակ երկու ձեռքով
ստորագրելու այդ համեստ ծրագիրը և զը-
րանով փակելու հայոց հարցը, նորից սկսեց
իր զինանազնական աշքակապութիւննե-
րը, և այս անգամ աւելի յանդուգն, աւելի
ինքնավստահ կերպով...

Թիւքրեայի այդ վերջին յանդուգնութիւնը
զրգուցեց ամբողջ քաղաքակիրթ աշխարհը:
Հայոց հարցի նախկին հակառակորդներն
անգամ, անկարող լինելով տանել օմա-
նեան պետութեան այդ վարմունքը, իրանց
երեսը դարձրին թիւքրեայից, և այսօր ա-
մենք միաբերան պնդում են, որ պէտք է
ոյժով ստիպել այդ մահաւոր ճիւղին
կատարել եւրոպայի կամքը, մարդասիրու-
թեան պահանջը...

Չէ տեսնում միթէ թիւքրեաց կառավա-
րութիւնը, որ բազմաթիւ պետական գոր-
ծիչներ, անթիւ լրագիրներ և նոյն իսկ
ամբողջ երկիրներ, որոնք մի քանի ամիս
թշնամի էին հայոց հարցին, և բարեկամ
օսանեան կառավարութեան, որոնք շատ
շատ, այն կարծիքի էին, թէ պէտք է ինչ զրեւ
թիւքրեային, որ նա մի փոքր լաւ վարվի
իր հայ հպատակների հետ, — այժմ, այլ ևս
անկարող լինելով տանել նրա անվերջ աշ-
քակապութիւնը, միաբերան պնդում են, որ
պէտք է ոյժով ստիպել թիւքրեային ըն-
դունելու լէֆորմները. իսկ շատերը նոյն
իսկ այն կարծիքի են, որ եթէ հարկ լինի
պէտք է դիմել ծովային ցայցին, պատերազմի:

Ահա թէ որտեղ հասաւ թիւքրեաց կա-
ռավարութիւնը իր ձգձգող քաղաքակա-
նութեամբ, մի քաղաքականութիւն, որ կա-
րող է զրկել թիւքրեային նոյն իսկ այնպի-
սի բարեկամներից, ինչպէս են թիւքրեայի
վարձերի, Նշմա Բարայէտ, և tutti quanti.
Միթէ թիւքրեան էլի կը ձգձգի...

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ ԵՒ ԵՒՐՈՊԱՆ ՄԱՄՈՒԼԸ

I

Անգլիական ամսագիրները սկսում են նուիրել
առանձին ստատիստիկաներ հայոց հարցին
և առհասարակ հայերին: Մի ամսագիր յունիսի
համարում զետեղված է մի յօդուած, որ ծանո-

ջողեցաւ: Անկէ իվեր կը ձանցուի իւր եւրոպա-
կան քաղաքականութիւնը լաւ հասկցող մարդ մը,
ու ամեն կեղծոտութեանց կը բործածուի: Կնքն
էր որ մէկ քանի անգամ Սուլթանին կողմէ Պատ-
րիարքին եկաւ, փորձիչ աստանայի դեր կատա-
րելու, բայց զլիակոր ետ դարձաւ: Այս անցաւ-
թիւքրեան սակայն իր ազդեցութիւնը չի տկարա-
ցուց, և իւր բարձրագոյն պաշտօնատար արտա-
քին գործերու նախարարութեան, կը գործածուի
Սուլթանին և զեպաններու յարաբերութեանց
իւր անուղղակի միջնորդ մը: Այս պարագայէն
կօզուուի Սուլթանին մօտ պաշտպանելու հա-
մար ընդդիմադրութեան գաղափարը:

Իսկ Ֆրանսո փաշա, որ հոս կը ձանցուի գիծ-
Ֆրանսո անունով, վերջերս նախարարներու խոր-
հուրդին մէջ առանց վախճալու յայտարարեց, թէ
հայերը այն ժողովուրդն է, որ ճաճկաստանը կը
անուցանէ: «Հայերուն հնորհին է, ըսաւ, որ մեր
մաքերը սակիով կը լեցուին. հայերուն հնորհին
է, ըսաւ, որ մեր գանձատունը կը հարստանայ,
ու մենք այդ պարկեշտ, խելացի, հեղահամարյոյ
և խաղաղասէր ժողովուրդին վրայ փոխանակ
գուրդուրուլու, զայն հաւանքեցինք, չարաբեցինք
և այն վիճակին հասուցինք, որ պարտաւորուեցաւ
եւրոպացիներուն գիրկն ինչպէ. ալ եղած եղած
է, պէտք է մեր պատիժը կրենք. Երազիրը ըն-
դունելու ենք, փասն դի այդ ժողովուրդը ուրիշ
կերպով չենք կրնար պահել մեզի հետ»:

Թանցնում է հայ կանանց դրութեան և բարեմա-
նութիւնների հետ: Յօդուածագիրը գովում է հա-
յուհու աշխատանքներին, մարդասիրութիւնը,
նկարագրում է նրա ձեռքով պատրաստած գոր-
ծուածները և մանուածները, ներկայացնում է
նրան իւրի օրինակելի տանիքին: Լրագիրները
տպել են քաղաւածքներ այդ յօդուածից, ինչպէս
օրինակ «South», «Wales», «Daily News» ևրա-
դիրները:

II

Անգլիական «Christian Commonwealth» լրագի-
րը, առաջ բերելով այս դարում թիւքրեայում
կատարված քրեական անարարութիւնը, որ հասնում
է մինչև 100 հազարի, բացականչում է.

«Ինչ ուղում է թող առի լորդ Մուլքերին, բայց
իւրաքանչիւր անգլիացի լաւ տեսնում է, որ
անկարելի է ներկայ վիճակը պահպանել, և նա
պէտք է ու մի քանի չը խնայի նրան փոխելու:
Անգլիան պէտք է այդ գործը աջակցի, եթէ
նա ցանկանում է մեծ պետութեան անուն կրել:
Բոլոր կառավարութիւնները պէտք է միանան
այս խնդրում»:

III

Շոտլանդիայի Կլիքսթրաք քաղաքում սկսում են
կազմվել միութիւններ հայկական խնդրի համար:
Լրագիրները ուշադրութիւն են դարձնում մայիսի
27-ի միութիւնի վրա, ուր դոկտոր Կլիքսթրաք մի
ճառ արտասանեց, որով նա ապացուցեց, որ պե-
տութիւնները պէտք է ամենամեծ ուժով պա-
հանջեն, որ լէֆորմների վերահսկողը բոլորովին
անկախ լինի սուլթանի իրաւասութիւնից:

IV

Կանտոնիկոս Մակիօլ լոյս է ընծայել մի փոքրիկ
բրօշուր, որ կրում է «Անգլիայի պատասխանա-
տուութիւնը Հայաստանի վերաբերութեամբ» (Eng-
lands Responsibility to Armenia) վերնագիրը:

Գրութեան վերաբերում է այն յայտագրին, որ
ներկայացրել են պետութիւնները սուլթանին:
Մակիօլ պնդում է, որ անգլիական կառավարու-
թիւնը պէտք է ամեն միջոց գործ դնի, որ բա-
րեկարգութիւնների վերահսկողը հպատակ չը լի-
նի սուլթանին և ազատ լինի թիւքրեայի ճնշու-
մից:

Մակիօլ իր յօդուածը ներկայացրել է այն նոր
կազմված մասնաժողովին, որի նախագահն է
Ուեստմինստերի դուքսը և որը կրում է Գրօս-

Սուլթանը թէն այս յայտարարութեան հետ
սխալութեւ չէ, որովհետեւ անխաղաղութիւնը ուղ-
ղակի իր անձին դէմ էր և Կիօլ իր ներկայու-
թեան հետ լուրս վճռում էր, բայց և այնպէս քա-
ղաքականութիւն սեպեց քանի մը օր առաջ զին-
քը հրաւիրել և հրամայել որ եթէ կրնայ թող իր
գաղափարները ընդունել տայ միւս նախարարնե-
րուն ալ, և այն ատեն ինչքա ալ իր ընկերը կը
մտածէ: Գիծ-Ֆրանսո այս առթիւ մեծ կռիւ ու-
նեցաւ նախարարներուն հետ, մասնաւորապէս
յարձակում ըրաւ ընդդէմ ծովային նախարարին,
որ կը յոխորտար թէ նաւատորմից զինադրե-
լու վիճակին մէջ է:

—Ինչ, այսպիսի միջոցներ ծախսելէ յետոյ
կարող չեղաք, ըսաւ, մէկ զրահաւոր մը զրկել
ֆիլ և մորեքնուդ կանցնէք Եւրոպայի դիմադրել:

—Չորս զրահաւոր պատրաստ ունիմ, գոչեց
ծովային նախարարը:

—Այո, ըսաւ գիծը, որոնց ամեն մէկը մէկ
ժամուան մէջ չորս մղոն չի կրնար կարել, մինչ
եւրոպական զրահաւոր մը քսան մղոն կը կտրէ:
Գիծը վաճառականներ էր, և ոչ թէ նախարար,
միայն երկիրը կողոպտել և կործանել ջանացէր:
Եւ հիմա ինչ կը յուսար ընել:

Կիօլը մեծցաւ. Գիօլը և ծովային նախարարը
իրարու դէմ սուր քաջեցին. միւս նախարարները
մէջ ինկան, և հաղիւ կարելի եղաւ հանդարտու-
թիւնը վերահաստատել:

վերնոր Հատուի մասնաժողով (The Grosvenor House Committee) անունը:

V

Լ օ ն դ օ ն ի յ «Нов. Время» լրագրին հեռագրում են մայիսի 25-ից հետևեալը:

«Այսօրվայ լրագրներում տարված է այն ըէֆօրմէնի ծրագիրը, որ ստաջարկել են Հայաստանի համար մեծ պետութիւնների դեսպոնները Կ. Պոլսում:

«Անգլիական մամուլը այդ նախագծի մասին այն միտքն է յայտնում, որ Բ. Դուռը առաջ էլ խոստացել է հայերին նոյնաման վարչական ըէֆօրմներ, բայց չէ կատարել իր խոստումները:

«Այնու ամենայնիւ, մամուլը հաւանում է նախագծի մի քանի յօդուածները, որոնք կարող են նպաստել հայկական ազգայնական կենտրոնների կազմակերպութեան, որոնք մի և նոյն ժամանակ անգլիական ազգեցութեան պետութեան կենտրոն պէտք է դառնան:

«Westminster Gazette» լրագրին ասում է, որ Անգլիան, օգուտ քաղելով Ֆրանսիայի և Ռուսաստանի օգնութիւնից, կարող է, առանց որ և է իրենի, ստիպել Բ. Դուռը կատարելու անգլիական դիպլոմատիայի պահանջները: Անգլիայի համար վտանգ կարող է առաջանալ միայն այն դէպքում, եթէ Ռուսաստանը և Ֆրանսիան անընդամենը Անգլիայից»:

VI

Պարզի լրագրները հաղորդում են, որ Մակ-Կլոի յայտնի աշխատութիւնը «Անգլիայի պատասխանատուութեան մասին» պէտք է լոյս տեսնի Պարիզում նոր տպագրութեամբ: Այդ տպագրութեամբ պիտի կցվի Գաղտնիքի գրած մի առաջաբանը:

VII

Անգլիական «Daily News» լրագրի Բերլինի թղթակիցը ասում է, որ գերմանական քաղաքական չրջաններում լուրջ չեն համարում ըէֆօրմների ծրագիրը մերժելուց առաջացած դրոշմները: Կարծում են, որ վերջի վերջոյ ստելվանը կը համաձայնվի, հէնց որ կը տեսնի, որ պետութիւնները դիտարկութիւն չունեն դիմել և կը սնդնեն իրանց պահանջները վրա: Այդ գործում անմիջապէս հետաքրքրված երեք պետութիւնների դեսպանների հետ Աւստրիայի, Գերմանիայի և խալիսիայի ներկայացուցիչները նոյն պէս, իրանց կողմից, կաշխատեն իրանց ամբողջ ազդեցութիւնը գործ դնել Բ. Դուռն վրա, որպէս զի ստիպեն նրան պիւնտիներ անել:

IX

Լ օ ն դ օ ն ի յ «Новости» լրագրի թղթակիցը դերում է:

«Հայոց հարցը, ինչպէս երևում է, սուր կերպարանք է ընդունում: Անգլիան պահանջում է, որ պետութիւնների հաւանութեամբ մի նահանգապետ կամ բարձրագոյն կոմիտար նշանակվի, և սնդնում են, որ այդ կոմիտարը քրիստոնեայ լինի և դուրս լինի Բ. Դուռն վրա, որպէս թիւրքաց ծառայութեան մէջ գտնվող յայնրը:

Այս պատկերները ամեն օր կը ներկայացուին Նալբախի պալատին մէջ ու Դուռը, առանց հետեւնել էր որ Սուլթանը ուղեց չէրդ դիւր ընել և ժամանակ վատակել. ուստի և հաւատարմապէս պատուէց Գիֆֆօտան և խեղճ-Միւնիկը: Նոյն պահի դիւրեր, երբ ապահով եղաւ թէ ալ հայերը ժամանակ չեն ունենար իմանալ Նալբախի համար իր ստեղծ որոշումը, որով կրնար հանգիստ սրտով յաջորդ առտու կանուխ դուրս ելլել և վերադառնալ, աճապարեց իր մերժողական պատասխանը զրկել Անգլիոյ դեսպանատունը: Ասով Սուլթանը կը յուսար որ իր չուրջը զանազան խաղաղութեան դոճ մնալով այս պատասխանին իրեն դէմ ու է զանգուտի մը պատճառ չեն ունենար, այս ըրաւ, ու հանգիստ սրտով դուրս ելաւ ու վերադարձաւ: Հիմա իր առջևը ինը ամիս ունի, մինչև որ երկրորդ անգամ մը ալ Նալբախի պարիսպներէն դուրս ելլել հարկադրուի: Մինչև այն ստեղծ ալ «Ալլա՛ թէրիմ»:

Սուլթանին ուրիշ մէկ քաղաքականութիւնն է, այս օրերու, պատիւներ ու աստիճաններ ստալ քանի մը հայերու, որոնց մէջն է նաև հանրաժանութի Նուրեհան, որ վեցիրութեան համեմու ճամբուն մէջ բաւական յառաջացաւ, ընդունելով փառաշայի աստիճանը: Սուլթանը կը կարծէ թէ չքանդ չաններ չորհրդով մէկ քանի հայոց, կրնայ հայոց սիրաւ չանել, այս կարծիքը ունեն բոլոր թիւրքերը:

մահմեդականներից վատ են: Եթէ պետութիւնները կը հրաժարվեն պաշտպանել այդ պահանջները, այն ժամանակ Անգլիան, շատ հաւանական է, կը բաժանվի նրանցից և կը հետևի իր սեփական քաղաքականութեանը»:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՇԵՐԸ

Քանի տարի առաջ մեր դեռ. այնպէս էինք վերաբերվում դէպի դրքերը, ինչպէս, մի սրամիտ դրողի ասելով, գաղտնիքները դէպի պահելը, —սիրում էինք հինը, որը ընկածը:

Այժմ մեր ճաշակը մի քիչ փոխել է: Այժմ մենք չենք սպասում, որ անհետ լինի մեծ գրողները չիրմը, այլ խոստովանում ենք այդպիսիների արժանաւորութիւնը նրանց դադարի առջև: Առաջ մենք «մեռելոց» կատարել գիտէինք, այժմ սովորել ենք թաղել: Թաղել այնպիսի անկեղծ վշտով և այնպիսի մեծ շուքով, որ պատիւ կը բերէր մեղանից աւելի կիրթ ժողովուրդներին: Այդ մեծ քայլ է դէպի առաջ, բայց այդ դեռ շատ քիչ է և, պէտք է խոստովանել, յիշեցնում է յայտնի առածը—«գնա մեռի, արի սիրեմ»:

Ի հարկէ, դեռ վաղ է պահանջել մեր հասարակութիւնից, որ նա քաջաւերի սկսող հեղինակներին, որոնք իսկապէս ամենից շատ են կարօտ քաջաւերութեան, բայց մեզ թվում է, որ հայ հասարակութեան բարոյական այժմիկի վեր չէ ամենակէս գնահատել իր գրականութեան վեռաւնի Բ. Դուռն, որոնք արդէն մոտեցել են իրանց արի մայրին և որոնց մատուցած ծառայութիւնները վեր են կախվածից:

Հարցը ոչ միայն այն ներքին բաւարարութեան մասին է, որ կը պատճառի այդ գնահատութիւնը գրականութեան բազմաշխատ մշակիչներին և որ անկարող է զգալ դադարում ամիտի մեծ դիմելը, այլ և այն ծանր հոգանքի մասին, որոնցից կարող է աղատել այդ գնահատութիւնը: Այդ մշակիչներն:

Կարելի է շինելի հետ երկիրը համարել բանաստեղծների բաժինը, կարելի է Պլատոնի հետ պահանջել, որ կոչիկ կարելով և հայ թիւերով զբաղվեն այն բոլոր հրապարակասիրները, որոնք անընդունակ են թեոսեին նման գրել, գրել իրանց «սրտի արձան» և ներառելի հիւրերն, բայց պահանջել, որ գրողները ամենին չը մոտենան կոչիկներին և հացի մասին, պահանջել, որ նրանք հագնեն այնպէս, ինչպէս «չուշանը վայրենի» և կերակրվեն «երկնից թուշունների» նման: անկարելի է, որովհետեւ գրողի ներառելը ինչքան էլ զրկվեն հիւրից, այնուամենայնիւ զգալուն կը մնան դէպի ցուրտը և որովհետեւ «ինչքան էլ սքեչնչված լինի գրողը, նա ունի մարմին և ոսկրներ, որոնք նրան էլ, ինչպէս միւս մարդկանց, ստիպում են ճաշել 365 անգամ տարվայ ընթացքում»:

Քանի մը տարի առաջ, քանի մը թիւրքեր, բարեմիտ և միամիտ, զարմանք կը յայտնէին ինձի, թէ ինչու հայերը այդքան իրար կանցնեն, ինչ կուզեն:

—Այլ կուզէի, մեր թաղաւորները երեք հայու վեցիրութիւն ասուր են: Արքայաճառ փաշան ունի, Բեկուր փաշան, Արթին փաշան: Երեք միւշի փաշա ունենալէն ետքը աստիճանութիւն չէ ելլել զանգաւորներ ընել:

Ու Սատուի ջարդէն ետքն ալ դեռ իրենց համադրումը փոխած չեն:

Մինչ ծրագիրը կը մերժուէր Սուլթանին, նոյն ժամանակ պաշտօնապէս կը հարցրուէր մեր Պատրիարքին: Անգլիոյ դեսպանը մայիս 19-ին պաշտօնական նամակ մը գրելով պատրիարքին, կը ծանուցանէր թէ Հայաստանի բարեկարգութեանց համար ծրագիր մը պատրաստուելով մատուցուած էր Սուլթանին ընդունելութեանը: այդ ծրագիրը, հաճութեամբ Ֆրանսիայի և Ռուսիայի դեսպաններուն, պաշտօնապէս կը հաղորդէ նաև Հայոց Պատրիարքին:

Պէտք է ըսել թէ մեր չրջանակներում մէջ շատ զգոհութիւն կը տիրէր, որ այդ Նալբախը Սուլթանին ներկայացուած օրը միանգամայն Հայոց Պատրիարքին ալ չէր զրկուած պաշտօնապէս: Թիւրք կառավարութիւնը վերջերս կը ժխտէր Հայոց Պատրիարքին քաղաքական ինքնիշխանութիւնը:

Միանգամայն հիշե է, որ գրողը գրելիս պէտք է ի նկատի ունենայ միմիայն իր ներքին պահանջը և այն դադարը, որին ինքը ծառայում է, բայց նոյնքան հիշե է և այն, որ նա չէ կարող ապրել միայն այդ պահանջով և այդ դադարով: Նրան անհրաժեշտ է ոչ միայն «բանն Աստուծոյ», այլ և «հայ հանապազորդ»:

Ինչպէս անել, որ նա ձգտի միայն դէպի առաջինը, բայց զուրկ չը մնայ երկրորդից, —անա մի ինչպէս, որ հասարակական կեանքի ներկայ պայմաններում շատ մեծ դժուարութիւններ է ներկայացնում լուծելու համար:

Քաղաքակիրթ երկիրներում գրական աշխատանքի ներկայացուցիչները արդէն ազատ են աղքատութեան Սեղլայից. Եւրոպայում չը կայ աղքատը հայկայից ասպիկներ յղկելով ինչպէս Սպինոզան: Այնուհը գրողների համար վտանգաւոր է միայն մամուլի խաբիւրդան, որից չը կարողանալով խուսափել, շատերը «աստուածային արհեստը վարձկան արուեստ են դարձնում»:

Մեղանում, որ մի բուռ աղք ենք գրադէտների ջնջին տոկոսով, այն էլ բաժանված մի քանի մասերի, որոնցից երկուսն ունեն առանձին գրականութիւն, տարբեր գրական լեզուներ և յատուկ հեղինակներ, —մեղանում վտանգը հակառակ կողմիցն է և խնդիր ոչ միայն դժուար լուծելի է, այլ և ներկայացնում է մի իսկական տրագեդիա:

Հայ ընթերցող հասարակութեան ուշքը վերջին ժամանակներու դարձված է դէպի այդ տրագեդիայի զոհերից մէկը—մեր տաղանդաւոր ժողովրդական գրող Վ. Աղապեանը, և այն մարդիկ, որոնց համար թանգ են հայ մանուկ գրականութեան յանձնը, հետաքրքրութեամբ սպասում են, թէ ինչ հետեւիքի կը բերի այդ ուշադրութիւնը, որովհետեւ գրականութեան դարգացումը մեծապէս կախված է հասարակութեան վերաբերմանից դէպի նրա աշխատանքները:

Գիտաւ չէ հասկանալ, որ գրականութիւնը գրողներին է պարտաւոր իր գոյութիւնը: Ով ասում է, թէ սիրում է գրականութիւնը, բայց անտարբեր է մնում դէպի գրողները միմեկը, նա կամ ստախոս է կամ պարզամիտ, իսկ ով չէ սիրում աղբի գրականութիւնը, նա չէ սիրում իր աղբը, որովհետեւ աղբը իր գրականութեամբն է աղբ:

Ամօթ է մի հասարակութեան համար, որ յաւանութիւն ունի ստուսմասէր կոչվելու, որ պարծենում է իր յառաջդիմութեամբ, որ իրան արժանի է համարում լաւագոյն ապագայի, —ամօթ է այդպիսի հասարակութեան համար թողնել, որ իր սակավթիւ արժանաւոր գրողների կեանքի վերջալոյսը մտաւանալ նիւթական ծանր հոգեւոր և այնպիսի մտածմունքներով, որոնք այնքան գեղեցիկ արտայայտված են առաջ հեղինակի «Пускай умру, печалью мало» բանաստեղծութեան մէջ:

Տ. Գովհաննիսեան

համար միջամտութիւն ընելու իրաւունքը, երեք դեսպանները հեռու պահելով Պատրիարքը Նալբախէն, ոչ ապաքէն իրաւունք տուած կըլլային Դուռն յայտարարութեանց, և այն պահում որ հայոց խնդիրը քաղաքական ամենամեծ կարեւորութիւն ունի և Նալբախին մէջ կը ճանչցուին Հայոց Պատրիարքին քաղաքական իրաւասութիւնները, կարելի էր պաշտօնապէս չի հաղորդել այդ Նալբախին Հայոց ազգին ներկայացուցչին, և սակայն երեք դեսպանները, չենք գիտեր ինչ պատճառաւ, երկու չաբաթ աղբ սխալը գործեցին, սակայն վերջի վերջոյ Պատրիարքաբանը դիւանագիտական յաջողութիւն մը ձեռք բերաւ:

Այս ինքնիշխանութիւն հետ միասին գրեթէ անընդամենը կանցնեն այնպիսի դէպքեր, որոնք երբեմն արտառիակաւ կը պահէին Պոլսին ամբողջ: Երեք օր առաջ զարկին Տիգրան անուանով լրտես ոստիկան մը, կողորդէն ծանրապէս վիրաւորուեցաւ և չի կարծուի որ ազատի, բայց եթէ առողջանայ, թիւ վերջը նորէն պիտի դարձուի, ինչպէս որ նա մտկով իրեն հաղորդուած է:

Այդ «տիրացու» Տիգրանը լրտեսաց ու մատնեց քանի մը հայեր, որոնք Համբարձման տօնին տաք երգեր երգած էին. իրաւ է որ ասանց մեծ մասը արձակուեցան, բայց և այնպէս, Տիգրանին լրտեսութիւնը չէր մոռցուած: Այդ արձակուածները նորէն ձերբակալուեցան և բանտարկուե-

ԿԵՐՍԻՆԱԳՈՐԾՆԵՐԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Մենք իր ժամանակին գրել էինք փոքր և միջակ կէրօսիւնագործների այն անմխիթար դրոշման մասին, որ ստեղծված էր 1893 թ. հոկտեմբերի 26-ին կազմած նրանց դաշնակցական պայմանի չորհրդէ:

Ներկայ տարվայ վերադարձ ամսին, Պետերբուրգում, մանուֆակտուրայի և արդիւնաբերութեան դեսպարամասին կից ժողով էր հրաւիրված, ուր պիտի քննվէր նախկին դաշնակցական պայմանի թերութիւնները:

Այս անգամ ժողովները շատ երկար տևեցին, վերադարձից մինչև մայիս, չորհրդէ այն հանգամանքի, որ աւելի մեր կէրօսիւնագործների կրքերն էին գործում, քան նրանց ուղեղները: Յաճախ ամբողջ ժամեր, օրեր նստում էին այս կամ այն անձնատարութիւնները ցեխոտ ելուստ, փոխանակ լուրջ քննադատութեան կնիքակալու. պայմանագիրը:

Այսպէս թէ այնպէս, չորհրդէ ֆիրմայի տաղանդաւոր ներկայացուցիչ Բեկեմանին, որը իր տկարութեան պատճառով ժողովները սխտեմատիկաբար չէ յաճախել, յաղթութիւնը մնաց վաղը և միջակ կէրօսիւնագործների կողմը: Նրանց յաջողից քննելը 1893 թ. հոկտեմբերի 26-ին կազմած պայմանագիրը և նրա փոխանակ կազմել նորը, բոլորովին նոր հիմունքների վրա:

Նոր պայմանագրի համաձայն այլ ևս դուրս չի կարող չորհրդէ կէրօսիւնագործների առաջին և երկրորդ խումբները, այլ այդ երկուսը ձուլվել են և դարձել մէկ: Նախապէս իր կէրօսիւնագործի մասնակցութեան չափը մնացել է նոյնը, ինչ որ ներշնչանքով էր նախկին պայմանագրի մէջ, շատ անհայտ փոփոխութեամբ:

Բայց էական տարբերութիւնը նոր և ինչ պայմանագրերի մէջ կայանում է նրանում, որ նախկին պայմանագրի համաձայն՝ դաշնակցութեան կարգադրիչ մասնաժողովի իրաւունքները սահմանափակ էին, իսկ առեւտրական գործակալներին՝ շատ լայն: Իսկ այժմ բոլորովին հակառակն է:

Կարգադրիչ կոմիտեոն բաղկացած է 14 ֆիրմաներից (տեղական): Նրանից է կախված արտասահմանեան աւետրի համար առեւտրական գործակալներ ընտրել այս կամ այն անձնատարութիւնը կամ ֆիրման, նրա հետ կազմել պայման, որոշելով փոխադարձ պարտավորութիւններ և իրաւունքների սահմանը, ունենալ զանազան տեղեր կոմիտեոններ, եթէ հարկը պահանջի, վարձել ծառայողներ, աշխատել որ նրանց մէջ տեղի չունենայ մրցում, ապրանք յանձնելու և ընդունելու համար կարգել սահմանել, նշանակել գներ, որոնք արտասահմանում աւելի ձեռնտու կերպով վաճառու տեղերը, —մի խօսքով կարգադրիչ կոմիտեոն պարտաւոր է գործ դնել իր բոլոր միջոցները, որպէս զի գործը աւելի բարեցալուց համագործակցութեան մէջ զրկի:

Բացի դրանից, նա պարտաւոր է հսկել, որ

ցան, վաճառողի վերաւոր լրտեսը յայտարարած է թէ իրեն վրայ դէպ պարպոյններ անող մէջն ըլլալու են: Ով գիտէ ինչ չարաքարներ ու տառաւորներ կը թաղան խեղճերուն պիւնտ, որոնք թերեւ տեղեկութիւն մը չունին:

Երբ Տիգրանը երեմն արեւմտում մըն էր, Ղարաթիւղ եկեղեցիին քարովի վարդապետին քով կը կենար իբրեւ միամիտ մը, և իր պաշտօնէն կողմուէր լրտեսելու համար եկեղեցիին մէջ անցած դարձած և քարովիչին այցելողները: Որ մըն ալ դիմալը վար առաւ, և իբր վարձատրութիւն, ոստիկանութեան պաշտօնին հասաւ. այնուհետեւ, մերթ անիւրեւ ոստիկան, մերթ ծաղեալ լրտես, իր տխուր դէրը կը կատարէր, մինչև որ գնաւով փոխադրեց զինքը:

Չենք գիտեր թէ ալ Սահմանադրութեան հանդէսը կը կատարուի թէ ոչ: Վերջնական որոշումը պիտի տրուի վաղուան Քաղաքական ժողովին մէջ:

Կիրակի օր Բերայի եկեղեցիին տօնն էր. Պատրիարքը չուղեց իրեն եղած հրաւերը ընդունելով պատարագել. վաճառող արտաքուց կարգի ցոյց մը պիտի ըլլար իբրեւ համակրանքի նշան իրեն: Որպէս զի ու է չփոխութիւն չի պատահի, Պատրիարքը խոհեմութիւն համարեց Գում-Գաբու մնալ:

ՆԱՍՏԱԿ ԹԻԻՐԻՍԻՍ

Երգը ու մ, մայիսի 15-ին

Նախորդ նամակով յայտնել էի ձեզ, որ Գեղեթյունի տոնը հայեր էին մոռելված, որոնցից միայն դիմելով միայն հաս բերելով հոգին յանձնառեցաւ. միւս երկուքը անյայտացան: Սոցա իշխու բնակիչ ըլլալը չը հաստատուեցաւ:

Համարտութիւնը սա է, որ նոյն օրը կարնէն պաշկերտից Սիմէօն պատուելին անցաւ իւր մի ծանօթ բարի հետ, իսկ նորանից յետոյ անցան մի բուսանդոցի քանանայ և երկու սասունդիներ: Կարնէն 10 վայրկեան հետի «չորս ակնանի» աղբիւր մը կա: Սիմէօն պատուելին անցնելով այդ աղբիւրի քովին նկատել էր, որ մօտ 20-ի չափ մարդ աղցան, բանջարեղէն կը խոզովէն, որոց մէջ և մի քանի զինուորներ կային: Ահա այդ աղբիւրից Սիմէօն պատուելին կամեցել էր քիչ ջուր խմել և այդտեղ սպանել իւր քիւրդ ընկերոջ: Սիմէօն պատուելին ըստ իր քաղաքի շրջապատում են պատուելուն և հարց ու փորձի ենթարկուած: Երբ իմանաւ են, որ հայ է, յարձակուած են նորա վրայ, իսկ միւս ընկերները կամենաւ են ձին փակցնել: Այդ միջոցին երեւում է պատուելիի քիւրդ ընկերը և առաջակները թողնում ու ցրվում են զանազան կողմեր: Եւ չանցած մի քանի րոպէս այդ առաջակներին զոհ են քնուած երեք անձներ, որոց սպանման լուրը իսկայն տարածուեց քաղաքիս մէջ:

Ոստիկանութիւնը հետամուտ էր եղել այդ լրատուներին, որ բանտարկէ և երբ չը կարողացաւ գտնել նրանց, այն ժամանակ յայտարարեց, որ կը բանտարկէ և խիստ պատժի կենթարկէ նրանց, որոնք կը համարձակին զրգարտութիւններ ընել անմեղ տաճիկներին: Իսկ հետեւապատու, տաճիկական ժամ 12-ին, ոստիկանապետը յայտնեց, որ 5 հոգու պիտի բանտարկէ, որոնք պատուած են եղել այս սուտ լուրը տարածելուն: Գաղտնաբերուածները խեղճ մանրակաշտ հայ խնամութեամբներ էին:

Մինչ սա կը պատրաստուէր խնամութեամբներին բանտ տանելու, Գեղեթյուն հրապարակեց մի քանի տաճիկներ լուր տուին, թէ իրենք անցնելով Գեղեթյունից, տեսան մի քանի զինակներ: Այս լուրը սատիկ շփոթեցրեց ոստիկանապետին, որը, անմիջապէս ձի հեծնելով, քնաց իւր քննելու իրականութիւնը:

Բախտի բերմամբ հենց նոյն առտու, տաճիկական ժամ մօտ 1-ին, ուստաց ընտուր Մարտիմովի կինը կը ճանապարհվէր դէպի Կարս, որին բարի ճանապարհ մտղիւնու եկած էին բոլոր Կարսից աղբիւր: Վերջինների մտադրութիւնն էր տիկին Մարտիմովին ուղեկցել մինչ Գեղեթյունի խանը և այնտեղ նախաճաշիկ տալ տիկինոջ: Այս պարզ ճանապարհորդութիւնը տաճիկները այլ կերպ բացատրեցին, կարծելով թէ սա խաղ մէ և սղա կերթան զինակներ քննելու:

Ահա թէ ինչու ոստիկանապետը շփոթուած ձի նստեց և սղացաւ դէպի Գեղեթյուն: Նա միանգամայն համոզուած էր, որ զինակները արդէն անյայտացած վերջացած են, դորա համար էլ նա ձեռնարկել էր մի քանի անմեղ հայերու բանտարկութեան:

Երբ մի քանի յանդուգն հայեր նկատեցին ոստիկանապետին թէ ինչու ապա անմեղ մարդկանց կողմէի բանտարկել, երբ նոցա լսած ու խօսածին զուտ համարտութիւն մէր, դարձեալ սուտ է, պատասխանեց ոստիկանապետը, որովհետեւ մի հայ է սպանուած, և այն էլ ով զիտ էր: Ահա ձեզ տաճիկ ոստիկանապետի տիպն ու լոգիկան:

Երէկ սրբազան Շիրմանեան մի ազգու քարոզիտուց եկեղեցում և ապա մի չարք բարեմաղթութիւններ անելով՝ հրաւիրեց ժողովրդեան եկեղեցի յանձնել և օգնել իրարու:

Պանդուխտ

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԳՐՈՂԻ ՕՐԱԳԻՐԸ

Այժմ ամենամեծ մօղան—հայոց հարցն է: Ես լսեցի, որ Պարիզի սպաններում «Սատուն» քաղաք ամենապայքարուն լեզուն է դարձել: Եւ անկասկած, եթէ նշանաւոր վօրքը, մօղաների

թագաւորը, կենդանի լինէր, այժմ պարիզուհիները կուենային պիտակի և Սատուն, վերահազգեստ և Սատուրի կամ և Գեղեթյունի Զարմանալի անհոգը մարդիկ են մեր թիֆլիսի մօղային խնամութիւնը: Կարծէք ամեն բան պէտք է զայ Պարիզից կամ վերջնապէս: Մեր մօղային խնամութիւնը, ինչպէս Տօլէ, Սեզալ, Զարալիսեան, Գուլաստով, խնայեցր չը կարեց, որ այժմ, երբ հայոց հարցն է առաջին մօղային հարցը, մօն տան մօղաներին, պատկերելով դիցուող «լիարկներ» և Սատուն, զանազան և և Շէնիկ, և կամ շան վզնոցներ» և և Զեքի-փաշա:

Եւ գիտէք ինչքան կը տարածվէր...

Ապացուց որ հայոց հարցը մօղային հարց է, վերցրեք իշխան Մէշչերսկու յօդուածները: Ամենքին յայտնի է, որ «Гражданин»-ի հանրաժանօթ հրատարակիչը մի սովորութիւն ունի, միշտ «է» ասել, երբ ամենքը «հա» են առում, և միշտ պաշտպանել այն, ինչ որ ամենքը առում են:

Երբ ուստաց լրագրիւնները մի քանի ամիս առաջ ծաղրում էին հայոց հարցը և հայկական սարսափները, իշխան Մէշչերսկին, հետեւելով իր սովորութեան, ջերմ պաշտպան հանդիսացաւ հայերին, բողբոջելով թիւրքաց զազանութիւնների դէմ: Իսկ այժմ, երբ ուստաց բոլոր լրագրիւնները բողբոջում են թիւրքաց զազանութիւնների դէմ և պաշտպանում հայոց հարցը, իշխան Մէշչերսկին, իր սովորութեան հաւատարիմ մնալով համար, սկսել է մի գլուխ ծաղրել հայոց հարցը, և հայտնել թիւրքաց հայերին... Խոստովանում եմ, Մէշչերսկին ինքն իրան այս անգամ էլ հաւատարիմ մնաց...

Այ գիտէ՛ք աշխարհ... Կար ժամանակ, որ շատերը հերքում էին, թէ աշխարհում գոյութիւն ունի հայ անունը, և Հայաստան երկիրը, իսկ այժմ դուրս է եկել մի խելօք հասկում, Պրոցէնի, որ միջոց կէս է լինում ապացուցանելու համար, որ ոչ թէ միայն հայերը եղել են և կան, այլ նոյն իսկ ուսանող հայերից են ծագում...

Ահ, ինչքան այժմ ուրախ կը լինեն մեր թիւրքապաշտները, որոնք զրբերում անգամ քարոզում էին, թէ առաջին մարդը աշխարհին երեւին հայն է եղել ստաւիկ լեզուն՝ հայոց լեզուն, և առաջին կերակուրը՝ հայոց սօղման:

Ես լսել էի, որ Սիմէօն Գուլասիւրեան «Արաբի» հրատարակիչը, Պետերբուրգի ուստաց լրագրիւններից մի քանիսի բէյօր տօն է, ըստ չէի կարծում, որ նա այնքան վատ բէյօրտեօր կը լինի:

Երեսպակեցեք, նկարագրելով հայոց Կաթողիկոսի ս վրտան, այդ բէյօրտեօրը անուանում է, ԳՍԻՄԻ I, ԳՍԻՄԻ II.

Մտածում եմ, սա ինչ ԳՍԻՄԻ-ներ են, որ հանդէս են եկել «Новости» լրագրի էջերում: Մենք անկախ երախտարար կը լինենք, եթէ Պետերբուրգից մեզ հաղորդեն, թէ զա ինչ ԳՍԻՄԻ I, ԳՍԻՄԻ II են և ինչ դործ ունեն այդ ԳՍԻՄԻ-ները Պետերբուրգում... Սպասում ենք:

Մի հարց: Եթէ մէկը, պատարագի ամենաբարձրան ժամանակը, ձեռքը տանի դէպի եկեղեցու տուփը, որ փող դրոշմայ, նրան պէտք է բըռնել, թէ ոչ:

Մեր «ազգային խաւարամիտները» ասում են, «Չէ, չը պէտք է այդ գողին բռնել, որովհետեւ պատարագի ժամանակն է գողութիւն անում»:

Իսկ ես ասում եմ, «Ոչ, թէ միայն պէտք է բռնել, այլ նոյն իսկ պէտք է երևին թքեր, որ նա պատարագի ժամանակն էլ ձեռք չէ վերցնում գողութիւնից»:

Առակս զինչ ցուցանէ: Ապա, ընթերցող, իմացեք:

ԳՐՈՂ

“ՄՇԱԿԻ” ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՐԻՉ, 31 մայիս: Բրեստից ճանապարհ ընկան Կիւ Վրասիային-Գերմանական ջրանցքի բացմանը ֆրանսիական երկու զինուորական նաւեր: Երբորդ նաւը ճանապարհ է ընկնում այս օրերս:

ԼՕՆԻՐՈՆ, 31 մայիս: Հնդկաստանից ստացված տեղեկութիւններին համեմատ, Պարսկում անգլո-ռուսական սահմանորոշ յանձնաժողովը յոնիսի վերջը կը գումարով վիկտորիա լքի մօտ:

Անգլիացիների դէմ ապստամբած Ռաբի-խանը փախաւ Աֆղանստան, ուր, Էմիրի հրամանով, կաշառուրված է:

Խմբակի՝ ԱԼԷԲԱՆԻՐ ԲԱԼԱՆԹԱՐ Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻԲԱՐԱՍԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՐ ՀԻԻԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՌՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 Ժ. վերաբուժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների:

Գ. Գ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 Ժ. աչքի, ներքին և նեւրոլոգիայի:

Կին-բժիշկ Ա. Ի. ՍՈՐՈԳԻՆԱ-ՇՁԵՐԻՆԻԱ—10—11 Ժ. կանանց և ներքին:

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻԻ—12—1 Ժ. ակնաջի, կուկորի, թոխ և կրծքի: Երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 1/2 Ժ. ներքին և երեսպայի:

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԵՎԻԻ—5—6 Ժ. երեք, հինգ, և շաբաթ:

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 Ժ. Սիֆիլիսի, մէղի և ռեւմատիկ օրգանների:

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7 1/2 Ժ. Ա. Գ. ԳՈՒՐԿՈ քիմիական և խոշորացուցական հետազոտութիւններ և անում մէղի, խիւ, առան, կաթի և այլն:

Վճար 50 կ: Համախորհրդի (Կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝ բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ: (№ 72)

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՐԴԸ

Խորհուրդը յայտնում է, որ առաջիկայ կիրակի, յունիսի 4-ին, երեկոյան ժամը 8-ին, դուռնի դահլիճում կայանալու է ընկերութեան անդամների արտակարգ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ, որի պարագմունքի առարկան լինելու է՝ երեւանի, Հին-Նախի-Չեւանի, Արդահանի ճիւղերի 1895 թ.ի նախահաշիւների և Կարսի ծիւղի 1895 թ. յաւելուածական նախահաշիւի քննութիւնը ու հաստատութիւնը: (№ 64) 1—1

Ըստ բարեհաճ թոյլտուութեան նորին բարձր սրբազնութեան վիճակաւոր առաջնորդի տէր Գեորգ արքեպիսկոպոսի, առաջիկայ կիրակի, յունիսի 4-ին, Մոզնու Ս. Գեորգ եկեղեցում, հանդիսաւոր պատարագ կը մատուցանվի նոյն եկեղեցու միաբան հայր ՄՈՒՆԵՂ ՏԵՐ-ՂԵՆԻԳԵԱՆԻ 25 ամեայ քահանայադրժուեան աւելթով: Ուստի սրանով ծանուցանելով նոյն եկեղեցու յարգող ծխականներին և ժամուսնորներին, այլ և հայր տէր Մուշեղի յարգողներին, խոնարհաբար խնդրում ենք շնորհ բերել այդ օրը յիշեալ եկեղեցին: Պատարագը կը սկսվի 10 1/2 ժամին:

2—2 Երեքգիտիան Մոզնու ս. Գեորգ եկեղեցու՝ Բ. ԱԼԻԲԵԳԵԱՆՆԵՐ

“ՄՇԱԿԻ” ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

Վաճառվում են հետեւեալ հայերէն գրքերը

- | | |
|---|--------|
| 1) ԷՎԵԼԻՆԱ, Գրիգոր Արծրունու | 50 կօպ |
| 2) ԹԻԻՐԴԱՅ ՀԱՅՏԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆ, Գ. Արծրունու | 20 “ |
| 3) ՄՏՔԻ ՄՇԱԿԸ, Խ. Մալուժեանի | 50 “ |
| 4) ՍԱՍՈՒՆ, Ա. Բալանթարի | 20 “ |

Օտարաբաղաւորները կարող են վճարել փողի տեղ ուղարկել պօստային մարկաներով: (№ 59) 5—10

Ա Ձ Դ

ՍԱԼՄԱՍԻ Հաֆթան զիւղի «Գրասիրաց ընթերցարանի» վարչութիւնը պատիւունի զիւղու յարգող պա. խմբագիրներին, հեղինակներին, թարգմանիչներին և այլ բարեմիտ անձանց, որ չը զլանան նուիրելու իրանց հեղինակութիւններից, թարգմանութիւններից, և այլ և այլ հրատարակութիւններից մի-մի կամ մի քանի օրինակներ այդ գրադարանին:

«Գրասիրաց ընթերցարանը» ներկայումս ունի 500 օրինակ գիրք, ստանում է թիֆլիսից, Կ. Պոլսից և այլ տեղերից 10 օրինակ լրագիրներ և հանդէսներ:

«Գրասիրաց ընթերցարանի» վարչութիւնը պատրաստ է վեց ամիս մի անգամ՝ մամուլի միջոցով հրապարակական հաշիւ տալ իր ստացած բոլոր նուէրների մասին:

Խնդրում ենք յարգող նուիրատուներից զիւղել այս հասցեով: Թիֆլիս, Խօսրոսի բարձրանարայ, Սողամն Հաւարթեանցին և Յակոբ Սարգսեանցին:

8—10 (№ 55)

Վարչութիւն



ՄԻՋՈՑ ԽԱՐԲՈՒՄԻ ԴԷՄ

Բժշկական զէպարամէնտից թղթաւորված

ՕԼՖԱԿՏՕՐԻՈՒՄ ՆՈՒԳԻԻԼԻՆ

Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՆԱԿՈՒ

Ծախվում է 40 կօպէկով

Դեղագործական Ապրանքների վաճառման Կովկասեան Ընկերութեան մէջ՝ Թիֆլիսում: (№ 22) 19—30